Զ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 12 ՄԱՐՏ 1903 — Թիւ 500

ՇԱՐԺՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՆԻ ՏԵՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

Վառնայի համար ամսոյ 10 սանթիմ

Նամակ և դրամ դրկել խմբագրութեանս հասցէին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ամսոյ
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ամսոյ
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք հաս չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԷՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՅԻՇԷ

Երբ ընկերս տենչի ծովուն խորը դոն,
Հեշտանքներու ծրփումներէն տարուբեր.
Երբ փաթթուին վզովդ շուրջը զո՛յգ թեւեր,
Թեւերն աղուոր՝ մատաղաչ կուռքի մը ժպտուն։

Երբ գինովցաս բոյրէն այտին վարդագեղ,
Մունջ ծրծելէն իր շուրթին դո՛ղն ու սարսուռ.
Եւ երբ յոգնած ալ սիրելէն՝ հանգչիս լուռ,
Իր հեւացող կուրծքին վերայ սիրաղեղ։

Յիշէ՛ որ հայ անմեղ կոյսեր կան անոք,
Ցաւէ թողուած իրենց բաղդին անողոք,
Հոն—հայրենի փերլատակայ մէջ—հեռուն։

Ամբի՛ծ կոյսեր՝ շուշաններու պէս ճերմակ,
Որ պոկուեցան արմատներէ եւ հիմակ
Նետրուած են գիրկերն անգութ լիրբերուն։

Վ Է Տ Ա

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Շումլայի հայոց իգական վարժարանի խնամակալութիւնեն։

Տիկիններ,

Շումլայէն գրուած նամակ մը իմացայ թէ այն խարխուլ և անճոռնի շէնքը, զոր մինչեւ հիմակ ստիպուած էիք գործածել իբրեւ աղջկանց վարժարան, փոխելու նշաններ ցոյց տուեր է։ Եւ դուք ձեր աշակերտուհիները, հաւանական վտանգէ մը ազատ պահելու համար, պարտաւորուեր էք փոխադրել հակեղեցւոյ բակին այն հին շէնքը, որ նահապետական կոչուելու բոլոր յատկութիւնները ունի։

Կը զգամ ձեր վիշտին մեծութիւնը, վասնզի մօտէն կը ճանչնամ այն գուրգուրանքը, զոր կը տածէք հանդէպ ազգին այդ աղքատիկ տունը, որ ձեր և ձեր նախորդներուն պաշտելի ջանքերուն շնորհիւը միայն կանգուն մնաց մինչեւ այսօր։

Իմացայ նոյնպէս թէ նոր վարժարանի մը շինութեան ձեռնարկելու գեղեցիկ փափաքը ունիք։

Բայց կը դեղեւիք ձեր վերջնական որոշումը տալու, որովհետեւ նիւթական միջոցներ չունիք ո՛չ դուք և ո՛չ Շումլայի աղքատիկ ու թշուառ ժողովուրդը։

Կը դեղեւիք, որովհետեւ վերջերս հանգանակութիւններու տարափ մըն էր որ տեղաց չորս կողմէն. որովհետեւ գիտէք թէ շատ դժուար է ամբողջ շէնք մը կանգնել հանգանակութիւնով միայն, ասոր անոր դիմելով, դրեթէ մուրալով։

Այո՛, դժուար է, բայց դուք փորձով ցոյց տուիք թէ կնոջական յարատեւութիւնը կարող է յաղթել դժուարութիւններու։

Շարունակ 20 տարի միմիայն պատահական նուէրներով կանոնաւորապէս ամբողջ վարժարան մը պահելը ի կապէս դժուար գործ էր. ձեր խնամակալութիւնը կլուս հանեց տարիկայ։

Գործունէութեան մը բոլոր վեհութիւնը կը կայանայ դժուարութիւնները արհամարհելուն մէջ։

Ցաղթանակի մը անուշութիւնը անոր դժուար ձեռք բերուելուն մէջն է։

Արհամարհեցէ՛ք դժուարութիւնները և կը յաղթէք։

Ձեր գործը արդար է և նպատակը պէնիւ։

Այն որ բարի գործի համար ճամբայ ելաւ՝ թող հոս չի դառնայ։

Տուէ՛ք ձեր որոշումը վճռականօրէն։

Կատարեցէ՛ք ձեր պարտականութիւնը և թողուցէ՛ք ազգին որ ան ալ կատարէ իրենը։

Նոյն իսկ դուք՝ ձեր անդամուհիներէն երկուքը թող չրչին մօտակայ քաղաքները։ Կնոջ գործունէութեան աս օրինակն ալ տուէ՛ք ձեր սեռակիցներուն։

Շումլայի հայերը՝ եթէ հիմակ ալ ունենային 30 տարի առաջ ունեցած իրենց նիւթական կարողութիւնը՝ իրենք կը շինէին իրենց վարժարանը, բայց հիմա չեն կրնար։ Հիմա ստիպուած են դիմել օտար քաղաքներուն. ինչպէս ատենով ասոնք կը դիմէին իրեն։

Եկէ՛ք հոս, գացէ՛ք Պուրկազ, Ֆիլիպէ, Ռուսճուք, անցէ՛ք Ռումանիա, պտտեցէ՛ք ամեն կողմ։ Դուք իրաւունք ունիք ըսել բոլոր հայերուն. «Պարոննե՛ր, մեր դպրոցը փլաւ, մեր զաւակները փողոցը մնացին։ Մեր պարտականութիւնն է դիմել ձեզ. կատարեցէ՛ք դուք ալ ձեր պարտականութիւնը։ Օգնեցէ՛ք մեզ, որ կարենանք պատսպարել ազգին փոքրիկ աղջիկները»։

Եւ հաւատացած եղիք որ ամեն զգայուն հայ պիտի զմայլի ձեր վրայ, պիտի խոնարհի ձեր առջեւ. և երկիւղած յարգանքով պիտի ստորագրէ ձեր հանգանակութեան թուղթը։

Ու դուք շնորհիւ ձեր անձնուիրութեան և հայ ժողովուրդի զոհաբերութեան պիտի կրնաք օժտել Շումլան կոկիկ վարժարանով մը։

Ընդունեցէ՛ք յարգանքներս։

Տիգրան Յ. Սահակեան

10 մարտ 1903

Վառնա

ԵՐԿՈՒ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Երկու շաբթի օրը Պ. Պ. Խուշփուլեան և Զիթճեան բանախօսութիւն ըրին հայ յեղափոխութեան և մեր ժողովրդին կացութեանը մասին։ Ունկնդիրները բազմաթիւ չէին. հաւանական է անոր համար որ երկու պարոնները չրչապատողները յարմար դատած էին միայն իրենց համակիրներուն յայտնել բանախօսութեան մասին...

Բանախօսները մեզի՝ ունկնդիրներուս ներկայացուցին իբր յեղափոխական հին ու փորձուած գործիչներ. իրողութիւն մը որ որ պ. Խուշփուլեանի մասին ճիշդ է, իսկ պատուելի Զիթճեանի մասին ոչ։ Ցեռոյ բանախօսները հասարակութեան ներկայացուցեցան լոկ իբր յեղափոխական գործիչներ, հնչակեան անունը բոլորովին չը յիշուեցաւ. ինչո՞ւ այդ զանցառութիւնը, մանաւանդ որ գործիչներուն անունն ալ չը տրուեցաւ հասարակութեան, կարծես ուզուեցաւ հասարակութենէն ծածկել անոնց հնչակեաններ ըլլալը...։

Զը մոռնանք ըսել որ երկու հնչակեան գործիչները կը վայելէին Գուրպէխեանի հովանաւորութիւնը։ Արչա՞փ հեռու բաներ, հայ յեղափոխութիւն և Գուրպէխեան?! Աւելի մեծ տարբերութիւն քան պատուելի Զիթճեանին օրինակ բերած առաքասանաւերու և շոգենաւերու միջեւ եղածը։ Բայց ինչ ընես, ժողովին մէջ խեղդուողը օձին ալ կը փաթթուի» կսէ առածը։ Զիթճեան իր յեղափոխական գործունէութիւնը Պուլկարիոյ մէջ սկսած է Գուլպէխեանները և Կրօն Միքայէլեանները յեղափոխական դարձնելով... բարի յաջողութիւն ... «ուր զեշք, անդ և սդռաւք»։

Պարոն Խուշփուլեան անկեղծ յեղափոխականի մը տպաւորութիւնը թողուց իրաւանկեղծ շեշտերով և համոզուած յեղափոխականի տրամաբանութեամբ։ Հայկական յեղափոխութեան անհրաժեշտ ըլլալը բացատրեց գոյութեան կռիւը հիմ ունենալով, դաւաճան անուանեց այն հայերը որոնք կը մամտան Խտրութիւն դնել Տաճկահայի և Ռուսահայի միջեւ, այդ անողոք որոշումին վրայ Զիթճեան և Գուրպէխեան ցնցուելէն իրար նայեցան բեմին վրայ, շնչեց հայ յեղա-

փոխական տարբերության միանալու անհրաժեշտութեանը վրայ։ Բանախօսը մի քանի անգամ բուռն ծափահարութիւններու արժանացաւ, նախապէս Դաշնակցականներու կողմէն։

Խուշփուլեանէն վերջ ոտքի ելաւ պատուելի Զիլինճեան, Խուշփուլեանի բաղմակողմանի, անկեղծ և ոգեւորիչ բանախօսութեանէն յետոյ պատուելիին ալ ըսելիք մը չէր մնացած. բայց խօսեցաւ պատուելին, ճիշդ պատուելիի մը պէս Ամերիկա երգած երգը երգեց. հայերու մարին մէջ սիրած չըփոխութեան վրայ խօսեցաւ. ուղղափառ յեղափոխական կուսակցութեան մը գոյութիւն չունենալուն վրայ խօսեցաւ? քննադատութեան ազատութիւնը պաշտպանեց, յեղափոխական մարմիններու մէջ եղած պակասութիւնները բնական հռչակեց. կարծես հնչակեանց խստաւոակութիւնները ակնարկել և թեթեւցնել ուզելով։

Իր հաստատքը յայտնեց որ շուտով բոլոր յեղափոխական տարրերը պիտի միանան։ Վերջապէս պատուելիական քարոզ մը, որով Ամերիկայի մէջ շատ փայլած է ազ մարդը... Պատուելին անկեղծ մարդու մը ապաւորութիւն չը թողուցաւ, որովհետեւ անոր շատ մը զաղափարները բանալբօսիկ կեղծով կաղապարուէին։

ԿԷՏ

ԲՕՐԻՍ ՍԱՐԱՖՕՎ
Ե Ի
ԹՈՎՍԱ ԴԱՎԻԴՕՎ

—o—

(Շար. նախորդ թիւեն ե. վերջ)

Մեր պատմածներից երկու տարի յետոյ, Նոր պատգամաւորական ժողով կազմվեց և Սարաֆովը ընտրվեց մակեդոնական Բարձ. կոմիթէի նախագահ, իսկ Դաւիդովը փոխ նախագահ. երկու ընկերները իրենց միւս ընկերների հետ մեծ եռանդով գործի սկսեցին։ Մակեդոնական կազմակերպութիւնը խոր արմատ ձգեց Բուլգարիայի մէջ։

Բաւական դրամ հանդանակվեց. Մակեդոնիա բաւական քանակութեամբ ռազմամթերք ղրկվեց։ Սարաֆովը դարձաւ մի պաշտելի անձնաւորութիւն բուլգար և Մակեդոնացի ժողովրդի համար։ Բուխարեստի մէջ մի լրտեսի սպանումը պատճառ դարձաւ որ Սարաֆովը և իր ընկերները ձերբակալվեն, Ռօդոսլավովի անկումից յետոյ. ձերբակալումից ազատվելուց յետոյ նոր Բ. կոմիտէ ընտրվեց. Սարաֆովի և իր ընկերների վրա մեղադրանքի տարափ տեղաց, երեկի պաշտելի հերոսները ամբոխի և դիլետանտների ծաղրի և հայհոյանքի առարկայ դարձան։

Մինչեւ ձերբակալվելը մի երկու անգամ առիթ ունեցայ տեսնվելու Սարաֆովի և Դաւիդովի հետ։ Ներքանք մի ահագին կազմակերպութեան նախագահներ, նոյն համեստ մարդիկն էին մնացել, միայն թէ զգում էին որ մի ծանր գործ են ստանձնել և պարտաւոր են իրենց դերի մէջ մնալ։

Անցեալ աշնան Միխայլովսկու կոմիտէն, որ առաջ ազատամարական քայլերի դէմ էր, որոշեց, իր անկումը փրկելու համար, արհեստական ազատամբութիւն բարձրացնել Մակեդոնիայում։

Սարաֆով և իր ընկերները դէմ էին այդ անժամանակ և արհեստական ազատամբութեան. դրա համար իրենց ներսի ընկերներին պատվիրեցին տեղերից չը շարժվել։ Այդպէս էլ եղաւ։ Բուլգարիայից ներս մտած հրոսակները մի քանի ընդհարումներից յետոյ, ստիպվեցան Բուլգարիա վերադառնալ։ Ձմեռը անկարելի էր կռիւը շարունակել. մանաւանդ որ ներսում գտնվող յեղափոխական գործիչները չէին մասնակցում։ Սարաֆով այդ միջոցին ապրում էր Եւրոպայում, նրա հակառակորդները այլ եւս իրենց լեզուին չափ չէին դնում և նրա յեղափոխական գործունէութեան մասը հռչակում։

Բայց իրողութիւնը եկաւ այլ կերպ հաստատելու։ Մինչ բուլգար կառավարութիւնը, մեծ պետութիւնների ճնշումից բռնադատած և նրանց տուած յոյսերից խաբված, ձերբակալում էր Միխայլովսկուն և իր գործակից բոլոր կարեւոր ընկերներին, Սարաֆով անցնում է Մակեդոնիա, ուր արդէն վաղուց գտնվում էր և Դաւիդովը. որպէսզի կարենայ գարնան սկզբներին ազատամբութեան դրօշը բարձրացնել։

Այսօր երկու ընկերները Մակեդոնիայում են գտնվում. կռիվ վայրում. կեանքերը ամեն ժամ, ամեն վայրկեան վտանգի ենթարկած, հաստատում իրենց հայրենիքին, հաստատում իրենց ընդդրկած ազատամարական գաղափարին. իսկ նրանց քննադատները բաւականանում են միայն Մակեդոնիայի ցաւերի մասին խօսելով և շատ շատ մի քանի սանտիմներ նիրելով թշւառ Մակեդոնացիներին։ Այդպէս է եղել ամեն ժողովրդի մէջ այդպէս է և մեր մէջ

Անշուշտ մեր ընթերցողները չեն մոռացել թէ «Իրաւունքի» խմբագիր Գուրպէթ օղլին ինչ լիրբ լեզու էր գործածում մեր անմահ գործիչ Սէրէմճեանի հասցէին. նրա կախաղան բարձրանալուց մի քանի ամիս առաջ։ Եւ այն օրը երբ մեզ հասաւ Սէրէմճեանի կախաղան բարձրանալու լուրը, նոյն օրը բուլգարական դատարանը իր «բրզովկա»ներն է (կոշնագիր) ուղարկում Սէրէմճեանին դատարան ներկայանալու և իր պատիւը պաշտպանելու մի մարդի դէմ որ հերոսի ոտքի ցեիը չայժելուց զատ, բացարձակ թրքական տրամադրութիւններ ունի։

Ու երեկ երբ պ. պ. Հմայակ Խուշփուլեան և Զիթճեան յեղափոխութիւնն էին դրատում թոյլ էին տալ իրենց հայ հերոսներին ամենասուր կերպով հայհոյող մարդի հովանաւորութեան տակ մտնել։ Զիթճեաններին այդ ներելի է. բայց Հմայակ Խուշփուլեանին ոչ։ Այնտեղ կար մի Ճանկիւլեան, որին որչափ էլ հակառակ լինենք, այնուամենայնիւ չենք կարող մի Գուրպէթ օղլուի հետ համեմատել. Խուշփուլեանը գոնէ նրա հրաւէրով ու նրա յանձնարարութեամբ պէտք է խօսէր հայ ժողովրդի հետ և ոչ Գուրպէթ օղլուի։

Խուշփուլեան և Գուրպէթ օղլու իրարու որոշ եւ տարբեր տիպեր չէին կարող իրար մերձենալ։ Ու ես ցաւում եմ Խուշփուլեանին այդ տեսակ մի սխալի մէջ տեսնելով, որովհետեւ նրան յարգում եմ իբրեւ հայ յեղափոխականի. իբրեւ նախկին գործակից ընկերոջ։ Խուշփուլեան անպատեւեց հայ յեղափոխութիւնը Գուրպէթեանին ձեռք մեկնելով...

ՎԱՐԴՕ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ

Սալմաստ, 20 փետր.

Ինչպէս Ատրպատականի բոլոր գաւառները, որոնք այսօր խարխափում են տգիտութեան խաւարի տակ, նոյնն է նաեւ Սալմաստում. որի ներկայ դրութիւնը ընթերցողներից շատերին յայտնի կը լինի արդէն։

Սալմաստում այսօր աչքի ընկնող 15ի չափ հայաբնակ գիւղեր կան, որոնք անհրաժեշտ պահանջ են զգում ուսուցչի, բայց դժբաղդաբար միայն 5ը ունի ուսումնարան, իսկ մնացածները զուրկ են բոլորովին։

Հարկ եմ համարում մի քիչ երկար կանգ առնելու այդ խնդրի վրայ, մանրամասնօրէն ներկայացնելու համար թէ արդեօք ո՞վ է մեղաւորը եւ կամ ո՞ւմ վրա է ծանրանում այդ խնդրի լուծումը։

Այդ հարցին պատասխանելը շատ հեշտ է միեւնոյն ժամանակ պարզ է։ Սալմաստի գիւղերը, եթէ այսօր զուրկ են ուսումնարաններից, դրա գլխաւոր պատճառը Ատրպատականի առաջնորդները են, որոնք աչքաթող են արել ոչ թէ մեն-ակ Սալմաստ գաւառը, այլեւ եւ ամբողջ Ատրպատականի միւս գաւառները, որոնք աւելի վատթար դրութեան մէջ են, մինչեւ անգամ իրենց մայրաքաղաքի գիւղերից զուրկ են. իսկ ի՞նչ են անում առաջնորդները, բաւական է միայն տէր-ղազարեան չխկադնեն եւ երբեմն էլ կրօնական քարոզներ խօսեն։

Այստեղ հարց է ծագում — արդեօք աւելի լաւ չէ՞ր լինի ամեն մի ժողովուրդ ինքը հոգ տանէր իր ցաւերին. դա մի որոշ չափով ճիշդ է, եթէ ժողովուրդը քիչ թէ շատ մի որոշ գաղափար կունենար կրթութեան մասին, միայն այդ ժամանակ կարելի էր։ Բայց ինչ ասենք երբ իր մտաղ տերունդի կրթութիւնը յանձնում է մի որ եւ է «տիլայոտ», որ գոնի անկիւններում, բայի մրտաւորը. այլեւ ֆիզիկականն էլ միասին քայքայում է։ (գլխաւորապէս խօսքս Հաֆթեան գիւղի տիրացուների մասին է)։

Երկրորդ՝ ռամիկ ժողովուրդը, այն հաւատը չէ ընծայում մի որ եւ է կրթեալ աշխարհականի, ինչքան մի փտած հոգեւորականի։ Կուրօրէն հետեւում է նրա բոլոր ասածներին, ինչպէս ոչխարք հօտը արջնորդում է իր խոյից։

Այդ կէտին էլ իբրեւ ապարդ ապացոյց մէջ տեղ կը բերեմ, 1902 թ. Ե. Ծ. վ. ամառուան Սալմաստ գալը որ մի ամբողջ ամիս այդ տեղ անցկացրեց։ Նախ քան այդ, հետաքրքիր էր իմանալ, թէ արդեօ՞ք ինչ նպատակ ունէր նրա Սալմաստ գալը։ Այդ բանին մի անգամայն պատասխան տալու մարդ իսկապէս դժուարանում է, անա թէ ինչ։

Նա՝ որ եթէ եկել էր ամառանոց, հապա՝ ինչո՞ւ էր ամբողջ օրը փակում սենեակում եւ չէր ուզում դուրս գալ։

Երկրորդ՝ եթէ մտածում էր, թէ ինչ հեշտ միջոցներով կարելի էր Սալմասի բոլոր գիւղերում ուսումնարաններ բանալ. փոքր ասուծոյ այդ էլ չէր։ Մի խօսքով, այնքան թոյլ գտնուեցաւ դէպի այդ խնդիրը, որ մինչեւ անգամ չը բարեհաճեց եղածները գոնէ բարեկարգել, որովհետեւ այսօր Հաֆթուանի եւ Կալասարի ուսումնարաններում կան այնպիսի ուսուցիչներ, որ Յիսուսի գլխաւոր առակներից զատ ուրիշ ոչինչ չը գիտեն։ Ուրեմն այդ էլ չէր։ Վերջապէս ես գալիս եմ այն եզրակացութեանը, որ Ե. Վ.ի միակ նպատակը այն էր, որ Սալմասի հայերին էլ, զուգնթաց կերպով, առաջ տանել, մասնաւորապէս Թաւրիզի հայերի հետ, այսինքն Սալմաստումն էլ կառուցանել մի օգտին կեդրոնական ուսումնարան, ինչ որ Թաւրիզումն է։

Բայց Սալմասցիների չար բախտից, ճանապարհին յատակագիծը կորցրել էր. եւ ահագին աշխատութիւն էր հարկաւոր, մի նորը կազմելու համար։ Գիշեր-ցերեկ մտածում ու մտածում էր. այժ տալով ֆանտազիային. լաւ էր, որ մի որ եւ է հոգեկան հիւանդութիւն չստացաւ եւ վերջ ի վերջոյ կարողացաւ կազմել նոյնութեամբ մի նոր յատակագիծ. ինչ որ Թաւրիզին էր։

Այժմ մնում էր գործադրութիւնը։ Մի քանի օրից յետոյ, կազմեց ընդհանուր ժողով, Սալմասի բոլոր գիւղերից։ Այդ բանը Սալմասցիներին պարզ էր, որ անհնարին է բայց ամենայնիւ՝ կարող էի՞ն դուրս գալ իրենց հայր սուրբի խօսքից։ ոչ երբէք։ Վերջապէս այսպէս վճռեց, քանի որ այդ ուսումնարանը Հաֆթուան գիւղումն է լինելու, պէտք է մեծ մասամբ ծախսը Հաֆթուանցիք հոգան։

Սարսափած մալով խեղճ Հաֆթուանցիք, ծախեցին իրենց միակ արօտատեղին զրկելով այլեւս անասուններ պահելուց, եւ այդ փողով գիւղի ամենայարմար տեղերին մօտ 7 բեռան չափ գնեցին միայն անունով կեդրոնական ուսումնարանի համար։

Բայց մթէ դա ուղղակի երախտութիւն չէր Ե. Վ. կողմից. արդեօք նախ չը մտածեց իրեն արածի համար, չէ որ, այդ բանը մի անգամայն անբնական է եւ չի կարող լինել։ Օրինակ՝ վեր առնենք հէնց մի երախայ, նախ քան ուսուցչի թուականական կանոնները բացատրելու եւ ասոիճանաբար հասցնելու այն կէտին, ինչ որ ինքն է կամենում, կարո՞ղ է միանգամից պահանջել մի որ եւ է խնդիր լուծելու, ոչ երբէք։

Այդպէս էլ կարող ենք լուծել այդ հարցը առանց ժողովրդին հասկացնել տալու եւ ժողովուրդը առանց ինքնուրեն գաղափար կազմելու այդ մասին. մենք չենք կարող մի անգամից այդ քայլը անելու։ դարձեալ կրկնում եմ որ դա անբնական կը լինի եւ ոչ մի զգալի արդիւնք չենք կարող տանալ ու մեր բոլոր ջանքերը ապարդիւն կանցնին։

Մի խօսքով Ե. Վ.ի Սալմասա գալը ոչ մի աչքի ընկնող նշանակութիւն

չունեցաւ, բացի վերեւ յիշած Հաֆթանցիների վնասը մարգագետինի խնդրում, եւ դրա վերայ աւելցրած ուրիշ 4 գիւղերի 700 թուման տուգանքը որ կառավարութիւնը ե՛վ փորձելու համար առեց։

Վա՛յ Ատրպատականցիներիս, եթէ միշտ այսպէս առաջնորդներ պիտի ունենանք, եւ մեր յոյսը սրանց վերայ դնենք։

Գարեգին

ՍԱԼՄԱՍԻ ՄԷՋ «ՀՆԶԱԿԵԱՆ» ԵՆԻՉԷՐԻՆԵՐՈՒ ԳԱՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—o—

Փայաջուկի դէպքը մի լիրբ, տոր դէպք է, որի նմանը դեռ տեղի չէր ունեցած։

Ուղիղ յունվարի 1ին երեկոյան դէմ, Փայաջուկ է գալիս Մուրատ (Ենակեան) եւ Իշեւանում՝ պ. Բաւջենց տան դէմ մտնում, տէր Աւետիքի տանը՝ սրա գալուց մի ժամ յետոյ գալիս են նրա չորս ընկերները, Զարվարով, չափազանց խմած, գիւղի միջի փողոցով անցնելով հայհոյում են գիւղացիներին, որ իրանց տեղ չեն տալիս, եւ էկեղեցի էլ մի ապտակ խփելով պահանջում են որ գի՛ դի տանուտէրի տունը ցոյց տան։ այդպիսի գոռում գոչումով մօտենում են տանուտէրի դռան առաջը, երկու հոգի մտնում են բակը եւ բարձրանում են դէպի սենեակը։ տանուտէրը նկատելով որ ոդերանցից մէկը ձեռքը տարել է դէպի գաշոյն եւ հայհոյելով ներս է մտնում։ տանուտէրը կասկածում է եւ պատուհանից իրան չպրտում է դէպի փողոցը։ օգնութիւն բղաւելով։ Այդ ժամանակ պ. Բաւտպի եղբայրները, Նարապետը Գրիգորը եւ Սահակը (Դաշնակցութեան համակիրներ եւ օգնողներ) իրանց փողոցի դուռը ծածկելով վերցնում են հրացաններ եւ բարձրանում կտուրը։ Նոքա զգում են որ մի չար բան պէտք է պատահի, որովհետեւ տղերքը հայհոյելով բղավում էին – «Փայաջուկցնե՛ր ձեզ բուլրիդ էլ պէտք է կոտրենք»։ բարձրանում են կտուրը առանց յմանալու որ իրանց տան դիմացի տէրտէրի տունը Մուրատը թաղնվել է, ուղիղ այն ժամանակ երբ տանուտէրը օգնութիւն է բղավում եւ տէր-ղէ գիւղը իրարանցման մէջ է լինում։ Եղբարք Մանասէրեանները օդի մէջ արձակում են մի հրացան, Մուրատը տէրտէրի տան դիրքը բռնած լինելով սենեակում, պատուհանից հրացանը ուղղում է դէպի Սահակը որ կանգնած է լինում մօտ քսան քայլի վերայ, Սահակը, (մեռած է է արդէն), աչ կողմի փորի կողքից վէրք ստանալով ընկնում է վիրաւոր, անմիջապէս Մուրատը արձակում է երկրորդ հրացանը նոյնքան տարածութեան վերայ, վիրաւորում է Դրիգորին ձախ ուսից։ այդ ժամանակ միայն բղաւում են որ Մուրատը տէրտէրի տանն է, Մանասէրեաններն էլ մի քանի հրացան են արձակում, սպանվում է միայն Զարվատարի մի ձին, երրոր մթնում է բոլորովին աղերքը բոլոր միասին քաշվում են, հեռանում, կառավարութեան ներքակալեց կասկածելի անձանց եւ խուզարկեց Սարամերիկ գիւղը մի քանի ուսանողական աներ, ձերբակալվեցին նաեւ վերոյիշեալ տէր Աւետիք քահանան, երկու օրից յետոյ ձերբակալվեց նաեւ տէր Մովսէսը որի հետ չատ անգիտօրէն են վարվել ֆառաշները, բանտում հիւանդանում է յիշեալ քահանան, թէեւ Սարիսարատին խնդրում են որ արձակի, բայց մերժում է։ վերջը ինքը Սարիսարատը տեսնելով որ արդէն քահանան մեռնում է ուղարկում է տուն։ ուր օր ու կէս տանջվելուց յետոյ վախճանում է, գոհ գնալով խեղճը։ մի օր յետոյ արձակում են բոլոր բանտարկեալներին։ Այդ լուրերը անցնում են Մոյ. Մուրատին Սէյիտավար գիւղում երբ ուզում են ձերբակալել, սպանում է մի խուրքի։ որի սրդին սպանում մի հայի, վրէժ լուծելով։ Սարամերկի խուզարկութեան ժամանակ, որպէս պատմում են, մի գիւղացի, որ փոքր ինչ հիւանդ է լինում, վախից տեղն ու տեղը վախճանվում է։ Ահա թէ որքան վնասներ առաջ եկան։ Գիւղացիք բոլորը տարակուսանքի մէջ են չգիտեն ինչ անել։

Քէրեան

ՔՈՆՍԹԱՆԵԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ

—o—

Թաղ. կան խորհուրդներուն ցոյը

—

Գ.

Ոչ այնչափ անհամբեր, ո՛չ ալ այնչափ ապուշ չի պիտի ըլլանք պատասխանելու համար ծիծաղելի հերքումի մը, որ դեռ մեր վերջին բառը չարտասանած՝ հրապարակ կը նետուի։ Նպատակ ունենալով նախ՝ Դատաւորեան քահանայի մասին մեր գրածները սուտ հռչակելով՝ մեր ձայնի ուժգնութիւնը տկարացնել, ու յետոյ՝ անոր համար հրատարակուելիք յետագայ ծանրագոյն ամբաստանութեանց մասին՝ հրապարակը վարժեցնել՝ աւելի մեղմօրէն զանոնք ընդունելու։

Ծէրտէ՛ր, տէրտէր, եթէ մենք լըռենք, քարերն ու ապառաժնե՛րը իսկ չի պիտի դադրին աղաղակելէ ձեր ըրած ճիշդիթիւթիւնները, չահատակութիւնները ու անօրինութիւնները։ Ուստի, կեղծ սասրագրութեամբ՝ ձեր հերքումին պատասխանելը, եթէ կարենար նկատենք, ժամանակին թողլով, մենք պիտի պատկերենք ձեր սխրագործութիւններուն շարքը և ձեր ա՛յն եպերելի ընթացքը, որոնք առիթը տուին ձեզ յաւիտենապէս խայտառակել ու ջախջախելու։ Եւ քանի որ դուք, ձեր պնակալէզ արբանեակներուն միջոցաւ, մինչեւ ցարդ ձեզ նկատմամբ եղած ամբաստանութիւնները սուտ և առանց փաստի հռչակել կուտաք, մենք՝ ո՛չ թէ ձեզ զոհացնելու՝ այլ ընթերցողը բացարձակապէս անկասկած ընելու համար, որմէ իրաւունքը չունինք բնա՛ւ առանց համոզումի մեզ հաւատացնելու, կը յայտարարենք և կապացուցանենք թէ։

Դատաւորեան քահանան, իր չահերու յաջողութեանը համար, ո՛րքան թշնամի մը եղած է քաղաքիս կրթական գործին։ Ո՛յնչափ և անպատուած ու սրբապղծած է Աստուծոյ Ս. տաճարը։ ըստ այսմ, ա՛յն ամէն ձայնաւոր աղ՛ց, որ դժկամակած է անոր զանձանակը պատչնել՝ անոր յանախակութենէն ամչնալով՝ Ս. պատարագի միջոցին իսկ՝ հէք դպրոցականը մկրտած է փողոցային հայհոյութիւններով։ և Ս. եկեղեցին՝ իր պնակներու անվերջանալի չարքովը՝ խանութ դարձուած է, թշուառականը։ Եւ դպիրներու վրայ՝ Դատաւորեան քահանային թափած ժանրը՝ ո՛չ թէ անոնց անպարտաճանաչութիւնը առիթ տուած է, որովհետեւ ի՛նքը եղած է մեծագոյն անպարտաճանաչը՝ նոյն իսկ, մէկէ աւելի անգամներ, Տօն օրերու Ս. պատարագի մատուցումէն իսկ խոյս տալով՝ իր չահին համար, այլ անոր համար որ, անոնց՝ դպիրներուն ալ իրաւունք տրուած է տաղաւար օրերուն պնակ մը ունենալ՝ փսխան իրենց աշխատութեան։ Ու, հակառակ իր կոչման ու քրիստոնէական վարդապետութեան, երկա՛ր ժամանակներ, քէն ու խառնըլլալով պաշտօնական մարմիններու ու ազգայիններու հետ Ս. պատարագ մատուցած է՝ ի գայթակղութիւն հաւատացելոց։ Սո՞ւտ են ասոնք. — կրնանք ապացուցանել ամենքն ալ։—

Դատաւորեան քահանայ կեղեքողը եղած է քաղաքիս հայ հասարակութեան. ըստ այսմ, ազգային հնաւանդ սովորութիւն անուան տակ, համեստ դասակարգի հարստանկան հանդէսները չահագործած է, հոն ալ պնակ պտուցնելով՝ առանց սակայն քաջութիւնը ունենալու զայն բարեկեցիկ հարստանաց մէջ կատարելու։ ու բարեկեցիկ մատաչ մանկան մը անուան տօնախմբութեանը՝ առանց ամչնալու՝ միշտ վաղած է կրծօն մը ստանալու։ երբե՛ք սակայն մտաբերելու թշուառի մը ո՛չ թէ անուան, այլ հիւանդութիւնը մխիթարելու բարոյական պարագան։ Ասո՞նք ալ սուտ են։— Լա՛ւ, կապացուցանենք ասոնք ալ։—

Ու ներկայ տարուց Ս. Ծննդեան առաւօտուն, մինչ ո՛չ միայն արենակից՝ ազգակից եղողները՝ այլ նոյն իսկ օտարազգի քրիստոնեաները գիրար կողչագուրեն ու իրարու կաւեանն Փրկչի Ս. Ծնունդը, եւ մինչ, նոյն առաւօտուն կրսենք, Թաղ. խորհրդոյ Պատ. մարմինը՝ իր ամբողջութեամբ, հասարակութեան մեկնելէն յետոյ, բանկալը կսպասէ մինչեւ Դատաւորեան քահանային պատարագէ յետոյ անզգեստաւորումը, որպէսզի պաշտօնական չնորհաւորութիւններ կատարուին ու տաղաւարի պնակի հասոյթը տրուի իրեն, Դատաւորեան քահանան դուրս կելլէ Ս. եկեղեցիէն, և, իր դժոխային դիմագծութիւնը մի ուրիշ կողմ դարձուցած, իրեն երկնցուած դրամի կապոցը կը յափշտակէ, ու առանց բառ մը արտասանելու, գոնէն դուրս կը խոյանայ ծայր արհամարհանօք և ուժգնութեամբ զայն պաշտօնական մարմնոյն երեսին խփելով։ Այս ալ յերիւրում է։ Բաւի՛, այս ալ կը հաստատենք։

Միասէր տէրտէրէ մը՝ ազգին ուղղուած այս ծայր նախատինքն ու անպատուութիւնը՝ ո՛ր և է վարչութեան մը լայն սիրտ համբերութեանը վերջ մը պիտի տար՝ քնականաբար։ Ուստի, վարչութիւնը, որ ինը տասը ամիսներէ ի վեր զայն միշտ խրատած էր դէպի լաւը, առանց սակայն անոր վրայ փոփոխութիւն մը նշմարելու, Դատաւորեան քահանային այս վերջին լիրբ արարքին վրայ՝ զայն իր առաջին նիստին կը կոչէ անկէ բացատրութիւններ պահանջելու և զայն ուղղութեան հրաւիրելու դիտաւորով։ Դատաւորեան քահանայ, իբր պաշտօնեայ Ազգային իշխանութեան, իր լրբութիւնը այնչափի կը հասցնէ, որ նախ քան ժողովոյ ներկայանալը՝ պայման կառաջարկէ անոր, ազգային ձայնով ընտրուած մարմինը իր ստորագաս մէկ պաշտօնեան կարծելու հակայ տգիտութեամբ ու ամբարտաւանութեամբ։

Ա՞յս ալ կրնանայ։ Եա՛ տարի, այս ալ կրնանք վաւերացնել։

Տէրտէր, ասկէ անդին ձեր ըրած խայտառակութեան անճոռնի պատկերն ալ գծե՞նք, գրե՞ք։

Գրենք, գրե՛նք պիտի, եթէ նոյն իսկ զայն սուղ գինով մեր տուժելն ալ գիտանանք։ ինչպէս որ շատ անգամներ անցեալին մէջ գրած ենք, յետ այսու ալ պիտի չարունակենք գրել՝ ձեզի և մի՛այն ձեզի նմանող սեւազգեստներուն դիմակները պատռելու համար, քանի որ հանրութեան շահը այդ կը պահանջէ։ և հանրութեան շահը՝ մեր ալ՝ ձեր ալ շահէն անհունապէս բարձր է։ Հասկցա՞ք դուք որ, ձեր նուիրական պաշտօնին անգիտակ, ու անոր բերումովը տեղեակ՝ ժողովրդեան ամէն մէկ դասակարգի անհատի տկար կողմերուն, ձեր փառքին կամ ձեր որկորին՝ ձեր հաց ու պանիրին յաջողութեանը համար, կը սողաք անոր ոտքերուն ներքեւ, արգելք կը հանդիսանաք անոր լուսաւորութեան գործին, ու անոր համար աշխատողները՝ մրոտել, սեւցնել, պառակտել ու կազմալուծել կը նկրտիք։ որպէսզի մութին մէջ՝ չահատակութեանց ընդարձակ ասպարէզ ունենաք...։

Այսպէ՞ս քարոզեց բարոյականի մեծ վարդապետը Յիսուս, այսպէ՞ս օրինակ տուին ու կուտան մեր նախնի ու արդի կրօնական մեծ հայրերը, որոնք մեզի պաշտելի ու փարելի դարձած են։

Ճսլմա–Իշխան
(Շարունակելի)

9 մարտի 1903
Քոնսթանցա

ՊԱՏԼՈՒԱՆ Ն ՊԼՏԱՈՒԱՆ

Առ Տ. Մատաթիա Սուրիասեան

Կարդացի ծիծաղելի պատասխանդ։ չեմ ցաւիր ատոր վրայ որովհետեւ երկու տող հայերէն գրուածք մը հասկնալու անկարող էք։ Ի՞նչ կըսէք դուք։ Ես անձամբ գալով Ձեզ յանձնեցի աղջկանց վարժարանի մէջ տասը ֆրանք պսակդրամս։ Բուն իսկ իմ անունովս և ոչ թէ կեղծ անունով պսակուած եմ, որովհետեւ կեղծ անուամբ վկայագիր և ոչ մէկ հայ կրնայ իւր ծնած քաղաքի պաշտօնական մարմնէն վկայագիր բերել տալ։ Իսկ գալով թէ դուն այն սաեանուան թաղական խորհրդոյ Ատենապետը չես եղեր, ինչ որ ալ եղած լինէիր, Ատենապետ, Ատենադպիր, Գանձապետ կամ պարզ անդամ, պարտաւոր էիր իմ Ձեզ յանձնած տասը ֆրանք պսակդրամս, նոյնպէս ամուսնութիւնս արձանագրել տալ, տետրին մէջ։ Վրկին կը հարցնեմ ձեզ Ազգին տուած այդ տասը ֆրանքը որի՞ գրպանին մէջ բանտարկուած մնաց։

Ցարգանօք
Մարտիրոս Տէր Բառաղամեան
Խարբերդեան Իլմէ գիւղէն
10 մարտ 1903
Վառնա

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻ ԵՒ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ

Ի Նպաստ Ազգ. Երկսեռ վարժարանաց Ռուսճուքի

ՄՈՒՏՔ

Եւրոպական վիճակահանութենէ	1852.—
Տեղափակ վիճակահանութենէ	354.—
Նուէր Եւրոպայէ	53.80
Մուտք պարահանդէսէ	497.—
Հասոյթ քարթերէ	28.25
« հանդերձապահէ	10.15
Շահ աճիւղ	12.70
	2807.90

ԵԼՔ

Եւրոպ. վիճակահանութեան ծախք	248.40
Նուագածուի	45.—
Աշխատող	44.40
Զանազանք	47.90
Տպագրութիւն	24.10
Քարթերու	20.20
Նիւթերու	42.80
	224.40
Զուտ հասոյթ ոսկի ֆր.	1095
Արծաթ ֆրանք	1240.102
	335.10
	2807.90

Հոգաբարձութիւն
Ազգային Երկսեռ վարժարանաց
(ԿՆԻՔ)
8 մարտ 1903
Ռուսճուք

ԾՈՎԱՓՈՒՄ

Կէս գիշեր է. Լուսինը այնքան պայծառ և վառվռուն, որ կարծես լուսեղէն շիթեր է կաթեցնում երկնքից. աստղերը պլպլուն. Ամեն ինչ լուռ է. լուռ է և ծովն. Գարնան հովի սիրքն մեղմ կերպով շոյում է ծովի մակարդակը.

Բուն, որ ինձից քիչ հեռու, աւանդական մարտկոցի փլատակների վերա թառել է՝ ժամանակ ժամանակ իրա սրտաճմլիկ վայոցով գալիս է այդ գերեզմանային խոր լռութիւնը ընդհատելու. Հանդարտ է ծովն. ոչ մի կոնակ չի նշմարվում նրայ վրայով և, ոչ մի շառաչ չէ լսվում. Ո՛հ ի՞նչ նորմալ վիճակ. Սակայն, նաւախանամութիւնը չէ սահմանել խաղաղ վիճակին այդքան երկարատեւութիւն.

Խենթ քամին ահեղ գոռումով յարձակվեց անուժ սիրքի վրա. սիրքը երեւի նկատեց թէ չպէտք է սարուկի նման ընկրկել առանց ինքնապաշտպանութեան մի ճիգ անելու, հանդէպ քամիի յարձակման, որի ուժը՝ թէպէտ իրանից անհամեմատ շատ է. Նադիմահարտեց. Սկսվեց կռիւը, որ տուեց մի քանի րոպէ ու քամին յաղթանակ տարաւ. Ահա գրութիւնը փոխուեց. Նորմալ վիճակը տեղի տաւ իրարանցման. Ծովը ալեկոծվեց. Կատաղի ալիքները՝ վերուվեր բարձրանալով իրար գիրկընդխառնուած, հրմշտակվելով՝ ահեղնագոչ շառաչ ու շըշնկոցով մաքառելով՝ զարկվում են քարաշէն պատնէշին.

Խաւարեց լուսինը և ամեն տեղ տիրեց սեւ մշուշ. Սեւ սեւ սմպերի կատրները՝ վազ են տալիս երկնքում. Շանթը փայլատակում է. որոտը աշխարհը թնդացնելով որոտում է. Ծովն ու երկինքը՝ թուխ մթնոլորտով իրար են միացել.

Ես յուզուած սրտով դիտում եմ այս զարհուրելի տեսարանը....

Սիրակ Ա.-ամեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

«Իրաւունք»ի վերջին թիւերը որոնք միշտ լի են թաղականութեան դէմ եղած յարձակումներով, կարդացի. կարդացի և անցեալ շաբաթ օրուան թիւը, որում տպագրուած էր տէր Մարտիրոս հոր նամակին միայն վերջին մասը. անշուշտ տէր հոր նամակին առաջին մասը շատ դպած է եղեր մեր չըլլայիք խմբագիր Գուրպէթ օղլուին չիլերուն. Այդ մասին համար ալ շնորհակալութիւն. որովհետեւ ինչպէս կերեւի տէր հայրն ալ հասկցեր է Շէֆքիին ինչ ըլլալ, որչափ ալ ան պոռայ «ես խմբագրի պարտականութիւնս կը կատարեմ».

Իմուշադրութիւնս գրաւեց մեռած «Հուգուզ»ին խմբագրի գիտողութիւնները, որոնցով այդ մարդը կը մեղքնայ Ռումանիոյ մէջ գտնուող Հայաստանցիները, որոնցմէ դրամ հանգանակուած է Վառնայի հայ դպրոցները պարտքէ ազատելու համար, ու կոկորդիլոսի արցունքներ կը թափէ Վառնայէն օտար երկիր մեկնող ճամբորդներուն վրայ, որոնցմէ թաղականութիւնը, հոգաբարձութեան գիտակցութեամբ, ի նպաստ դպրոցի սասնական ֆրանկկառնու. Գուրպէթի օղլու վերջին օրերս շատ կուլայ պանդուխտ հայերուն վրայ, որովհետեւ ատով կուզէ իբր թէ ժողովրդականութիւն ձեռք բերել, խռովութիւններ ձգել Վառնայաբնակ հայերուն մէջ, իրեն թագուն տենչանքներուն, որոնք մեզի շատ լաւ յայտնի են, հասնելու համար. Բայց միթէ ատ մարդը չի՞ հասկնար որ ամբողջ հայութիւնը գիտէ թէ ինք խմբագիրն էր այն «Հուգուզ» թերթին որուն մէջ ինք հետեւեալ տողերը կը գրէր «Շէֆքի» ստորագրութեամբ. «Վահա,(«Հայաստան») ըսուած վայրը մեր նախահարց սուրբ արիւնով առած ենք, ուստի չենք կրնար վատ հայերուն տալ... այն հայութիւնները (յեղափոխականները) թէ անցնելու և մեր օրհնեալ հողը անոնց անիծեալ ձեռքը չը յանձնելու համար զանոնք ոչնչացնելու ենք». ու միևնոյն օրուան հայերէն «Իրաւունք»ին մէջ Գուրպէթ ստորագրութիւնով Սուլթանի թագն ու գահը փշրել յախորտացող յօդուած մը կը գրէր՝ թէ Հասան Շէֆքիի պէս կատաղի թուրք մը որչափ կրնայ ցաւիլ հայ ազգին ու անոր գործերուն վրայ, ընթերցողին կը թողում եզրակացութեան յանգիլ.

Ես թաղական միւս գործերուն ծանօթ չեմ, բայց ինչ կը վերաբերի օտար երկիր մեկնող ճամբորդներուն, ատ ինձի լաւ յայտնի է. ահա թէ խնդիրը ինչի մէջ կը կայանայ.

Կառավարութիւնը ամեն օտար երկիր մեկնողէ կը պահանջէ անոնց տուրքի պարտքերը, մինչեւ 55 տարեկանէն. պարտք չունեցողն ալ 25 ֆրանք պիտի վճարէ որպէսզի կարենայ նաւ նստիլ. Վառնայի մէջ պարապ հայեր շատ կը գտնուին, որոնք կուզեն կամ Հայրենիք և կամ թէ ուրիշ երկիր մը երթալ. Նահանգապետը թախանձագին միջամտութիւններու շնորհիւ, շնորհ մը բրած է թէ մեկնող հայերուն դիրութիւն մը տալու և թէ ազգային դպրոցին շահու աղբիւր մը բանալու համար. որով ամեն մեկնող հայ հոգաբարձութենէն թուղթ մը կառնէ միւյն տասը ֆրանք վճարելով, կը ներկայացնէ հայասէր նահանգապետին. անորմէ երկրէն դուրս ելլալու արտօնութիւնը կառնու. Իսկ բոլորովին չունեւորները այդ տասը ֆրանկէն ալ կպատին, ինչպէս և շատ պատահած է. Եթէ թաղականութեան մասին բոլոր գրուածները այսչափ ճիշդ են. վայ խեղճ Հասան Շէֆքիին.

Վառնա. ի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Շուէտական կառավարութիւնը համաձայներ է երեք սպայ ուղարկել Մակեդոնիա. ժանտարմերին վերակազմելու համար. միայն երեսփոխանական ոյժումին կը սպասուի, որը նոյնպէս դրական պիտի ըլլայ. Թուրք կառավարութիւնը միւս պաշտօնեաները Թուրքիոյ մէջ ծառայող Եւրոպացիներէն պիտի նշանակէ.

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ շուտով Ամերիկեան ֆաւատորմիղ մը պիտի գայ Թուրքիոյ ջուրերը. այդ այցելութեան պատճառը այն է որ վերջին ժամանակներս Սուլթանը շարունակ Ամերիկեան դեսպանը կը խաբէ այցելութեան օր նշանակելով և այցելութիւնը չընդունելով, որովհետեւ դեսպանը պիտի պահանջէ Հայկական կոտորածներու միջոցին ամերիկեան հպատակներուն կրած զիանները հատուցանել. թրքահպատակ ու ամերիկահպատակութիւն ընդունողներուն ուռկախնդիրը կարգադրել.

— Սուլթանը Ադէնի սահմանները որոշելու խնդրոյն մէջ բոլորովին զիջած է անգլիական կառավարութեան որովհետեւ վերջինը լրջօրէն սպառնացեր է Թուրքիոյ.

— Սուլթանը սերպիական դեսպանին այցելութիւնը չի ընդուներ, որովհետեւ բարկացած է Ալէքսանդր թագաւորին դէմ, անոր պատերազմիկ ոգով արտասանած ճառերուն դէմ.

— Հիլմի փաշան, Մակեդոնիայի գլխաւոր կառավարիչը դացեր է Ալպանիա Ալպանացիները հանդարտեցնելու համար. Եթէ խաղաղ միջոցներով հնար չըլլայ, իբր թէ թուրք կառավարութիւնը բռնի կերպով պիտի ճնշէ ալպանացիները.

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ նախքին Եպարքոս Սայիտ փաշան իր ատենէն բանտարկուած է Սուլթանի հրամանով. Սայիտ որ անգլիական հովանաւորութեան տակ կը գտնուի, իսկոյն իր լացութեան մասին տեղեկութիւն տուած է անգլիական դեսպանին. Շնորհիւ դեսպանի միջամտութեան Սայիտին վրայ նշանակուած հսկողութիւնը մեղմացած է.

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տէլի Օրմանի թուրքերու մէջ անհնազանդութիւն և ըմբոստութեան նշաններ կը նկատուին.

— Սոֆիայի ոստիկանութիւնը քաղաքէն դուրս գտնուած թնդանօթաձիգ զօրքերու զօրանոցներուն քով թուրք սպայ լրտես մը ձերբակալած է.

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна